ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

ԹԷՈԴՈՐ ՍԱԼՀՈՒՆԻ

ԳՐԵԱՑ

Հ. ՄԻՆԱՍ ՆՈՒՐԻԽԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻ

ԱՀՐԿԸ
701

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1882

1/59.

ԱԳԳԵՐ
701
220000 9
563

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

ԹԷՈԴՈՐ ՍԱԼՀՈՒՆԻ

ԳՐԵԱՑ

Հ. ՄԻՆԱՍ ՆՈՒՐԻԽԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻ

Պատրիարքարան Պոլսոյ
ՍԵՐԵՐԱԿԱՆՆԵՐ
Ամրաթաղ

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՔ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1882

ԳՐԵԱԼ ՎԱՍՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԵՒ ՆԵՐԿԱՑՈՒՑՈՒՑԵԱԼ Ի ՆՈՅՏԱՆԷ

ՆԱԽ ՑԱՄԻՆ 1878, ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՑԱՄԻՆ 1882

701-2009
(3964
41)
18696

Պետական Գրադարան
Սերեբրյակովներ
Գանձարան

ԱԶԴ

Զպանծալի վկայաբանութիւն Թէոդորի Սալհունոյ, զհռչակեալն վաղ ուրեմն յաշխարհիկ բարբառ ընտիր և գորովական ոճով 'ի Յուշիկն Հայրենեաց, համարձակեցաք համառօտիւ ածել 'ի հանդէս թատերական երգովք վասն աշակերտաց Մուրատ-Ռափայէլեան վարժարանի։ Եւ յայս սակս իսկ յուսամք հանդիպել ներողութեան եթէ գտցեն ընթերցողք ինչ թերի 'ի սմա, ջանացեալ մեր ամենայնիւ կալ ամիսի 'ի սահմանն զոր պահանջէր հասակ նոցին և պայման և կար դերասանական։

ԹԷՈԴՈՐ ՍԱԼՀՈՒՆԻ

ԱՆՁԻՆՔ

ԹԷՈԴՈՐ կամ ԱԹԵՆՈԴՈՐ· Որդի Սուրէնայ։
ՍՈՒՐԷՆ· Իշխան Սալհունեաց, հայր Թէոդորի։
ԱՐՄԱՅԻՍ· Պատանի ազնուազգի մտերիմ Թէոդորի։
ՎԱՀՐԱՄ· Սեպուհ Սալհունի, մտերիմ Սուրէնայ։
ՔՐՄԱՊԵՏ։
ՁԻՆՈՒՈՐՔ։
ԴԱՍԻԿ· Քահանայ Քրիստոսի։
ՎԱՂԱՐՇ· Պահապան ամրոցին։
ՊԱՐ ՈՒՐԿԱՅ։

Տեսարանն ի Սեղեմնուտ ձորակի՝ մերձ ի Սուրէնաշէն ոստանին Սալհունեաց.

ՀԱՆԴԷՍ Ա.· (Ձորակ)

ՏԵՍԻԼ Ա.

ՈՒՐՈՒԿՔ

ՊԱՐՆ

Ստեղծէ՛ լուսոյ լոյս համասփիւռ
Յառաւօտուս ծագել լուսոյ
Յեղեմատունկ երկիրս այս քոյ
Ծագեա ըզլոյսըդ կենսաձիր։
Ձի քեզ զի քեզ յաւէտ արքեալքս
Յաւէտ պարուք առցուք նուագս

ՈՄՆ Ի ՊԱՐՈՒՆՆ

Այլ զինչ չըշուկ
Ասա ի դերբուկս.

ՊԱՐՆ

Ուր համերամդասք իշխանաց
Պաշտօնատարք Անմահին.
Երկըրպագուք արդ Քեզ խըմբին,
Պարք արհամարհ միայն ուրկաց։

ԱՅԼ ՈՄՆ

Ինքն իսկ ահա Թէոդոր,
Ընդ իւրում մըտերմի
Առ դըրունըս բերի։

ՊԱՐՆ

Ո՞վ պայազատ տան Սալհունի
Անօթ չնորհաց դու փարթամ.
Քեզ բիւրք հիւսին անթառամ
Պըսակք փառաց արփենի։

ՈՄՆ ՈՒՐՈՒԿ

Ա՛ռ մեզ ահա մերձենան, զի՞նչ ուրեմն անկ ի գործել

ԴԱՍԻԿ

Զգուշեաւ ի խորափիտս այս դերբրկաց թագերուք
Մինչև ի բաց դարձցի զոլոշն և մընասցէ թէոդոր.
Զի մի գուցէ աչք ժանտաժուտ լրտես անդէն ընթասցի
Ա՛ռ պաշտօնեայս գիւաց իւրեանց, զթէոդորէ ամբաստան։
Մինչև ցերբ Աստուած բարձրեալ, ծածուկ թագուն, մինչև ցերբ
Պաշտեսցի պաշտօն քոյ սուրբ, ծառայքդ յերկրի արհամարհ։

ՏԵՍԻԼ Բ.

ԹԷՈԴՈՐ ԵՒ ԱՐՄԱՅԻՍ

ԱՐՄԱՅԻՍ

Իսկ ընդէր ի քաղաքէս այսպէս բացեայ թափառիս,
Ո՞չ երկիւղ ունի ըզքեզ թէ յորոգայթ անկեալ չար
Եւ կենացդ իսկ անձկալի հասցէ վըտանգ դառնաղետ.
Ե՛կ դարձցուք, Աթենոդոր, մըտցուք անդրէն ի յոստանն։

ԹԷՈԴՈՐ

Թո՛ղ զիս աստ Արմայիս, են իմ պատճառք կարևոր,
Ցանկալի քան զամենայն և քան ըզկեանս անցաւոր։

ԱՐՄԱՅԻՍ

Բայց ո՞չ գիտես զ'ի ձորակիս ուրուկք միայն վատշուէրք
Եւ ըներան հանգուստասիլ աստ միաբան կենակցին,
Ո՞չ գարշէցիս ի վայրաց՝ ուր օդք իսկ են մահաբեր։

ԹԷՈԴՈՐ

Տեառն է երկիր լրիւ իւրով և ինքն ետեղծ զամենայն.
Ինքն ըլլերինս և ըզձորակս, ինքրն զարև և զաստեղս
Ըզծով մեծատարած զերկիրս անհուն և անծիր,
Եւ չիք վայր ուր չգուցէ ոգի նորա կենատու.
Նովաւ կեամք նովաւ իսկ եմք, առանց նորա չիք ինչ է,
Զի էութեան իսկ է աղբիւր՝ ինքն գոլով անբսկիզբն։
Եւ ուրուկքդ իսկ այդոքիկ զոր դու այդպէս անդոմնես՝
Նորա են գործք, ծառայք նորա գեր քան ըզմեզ հընազանդք,

Եւ զի՞նչ ընդ մեզ և ընդ նոսա, ով Արմայիս, են խըտիրք,
Ո՞չ ի ցաւս ծընաք և մեք ուրուկք հոգւով քան մարմնով։

ԱՐՄԱՅԻՍ

Ա՞յսպէս ուրեմն սկսանիս զառանցանաց քոց ըզվէպս
Ի լսելիս իմ յեղյեղել։

ԹԷՈԴՈՐ

Յընորականս, Արմայիս
Զայսոսիկ բանս համարիցես ինձ սիրելիս երկնառաքս.
Ա՜յո՛, յաւուր յորում երկինք ինձ ծագեցին զայս սուրբ լոյս՝
Ա՛յլազգ ամենևին զաշխարհայինս տեսանեմ.
Զիք ինձ խոտան ինչ յերկրի, նա՛ որ երբեմն այնպիսիք՝
Արդ փառաւորք և ցանկալիք։

ԱՐՄԱՅԻՍ

Բայց թախանձիմ լըռեսջիր
Զոր շըրթունք քո այդ անմեղք՝ յանգեսս իւրեանց բարբանջեն.
Զի՞նչ կազմածք արդ յոստանին, և ուր ՝նդ առաջ ընթասցիս,
Ընդունել զհայրքդ և զիշխան որ յաղթական աստ դառնայ,
Սպասք զոհին խցե՞ն պատրաստսք։

ԹԷՈԴՈՐ

Պատրաստ այո՛ ողջակէզն։

ԱՐՄԱՅԻՍ

Մոցուք ուրեմն յոստան փութով զի ապաքէն ձայնք լըսին
Կառաց շառաչելոյ, քաղաքն ողջոյն ալեծուփ,
Տեսանես զի ըստ դէրունս ոտնախմբեալ ընթանայ.
Արդարև ոտն ցընծութեան յաւուր յորում մերս իշխանն
Ի քաջարանց Տրդատայ պատուեալ շքով դարձ առնէ։
Օ՜ն ապա երթամք փութով, դու ամբոխին պարագլուխ
Ա՛րկ ըզքեզ զօրէնս պատուոյ պայազատի ՍալՀունեաց։

ԹԷՈԴՈՐ

Մուտ ի քաղաքն, Արմայիս, ընդ հուպ և ես դիմեցից,
Զի ոտնք այսօր ոչ խըմբեսցին ոչ կնքեսցին առանց իմ.
Բայց թախանձիմ թող զիս աստէն կալ միայնակ առ վայրս՝մի
Եւ յապարանս իսկ հօր իմոյ եկից ըզքեզ գըտանել։

ԱՐՄԱՅԻՍ

Եւ զինչ վնաս թէ կացցեմ աստ, զինչ քոյ յինէն կայ թագուն։

ԹԷՈԴՈՐ

Թէ սիրես զիս, Արմայիս, երդուեալ ի սէրդ կաթոգին
Թող զիս աստ միայնիկ և նոյն սիրով սիրեսցիս։

ԱՐՄԱՅԻՍ

Բուռն առնես ինձ ի մէկնել, հարկ է անսալ սիրոյ քում.
Ո՛վ Աստահիտ, մայր խնամածու, աջովդդ լեր հովանի։ (ՀԷՆԱՅ)

ՏԵՍԻԼ Գ.

ԹԷՈԴՈՐ (ԴԱՅՆԱՅ)

Ո՛վ քանի դառն ինձ տեսանել.
Զառաքինի սիրտ և զանմեղ
Դիւաց ժանիս մատնուրական,
Անկեալ դեռևս յանել վրտանգ։
Թէ ողջակեզ ինքնայօժար
Ազգն երկնից յարդար նրժար
Արիւնս իմ, ո՛վ Տէր փրկիչ,
Սրբակեալ ի հայրս, յԱրմայիս՝
Քեզ ծընուսցէ նոր խայրիս։

ՏԵՍԻԼ Դ.

ԹԷՈԴՈՐ, ԴԱՍԻԿ, ՈՒՐՈՒԿՔ

ԴԱՍԻԿ

Որդեակ դու սիրուն, աստուածական քանի խանդ
Վառի հրաբորբոք ի սիրտ քո այդ նորընծայ.
Ով ընորհք երկնահրաւէր՝ որ չև զեղեալ՝ իսկ յայանիս,
Արդ ահա եհաս հուսկ օր, եհաս և ժամն անձկալի

Ընդունելոյ զաւազանին ընորհաց պարգևս հոգևոր.
Բայց խորհրդոյդ մեծի սրբրուտ՝ կացից ես ոչ պաշտօնեայ։

ԹԷՈԴՈՐ

Եւ ո՞վ հայր։

ԴԱՍԻԿ

Խոստովանողքն Քրիստոսի Գրիգոր

Որ բազում տանջանաց տարեալ յանուն խաչելոյն
Արդ ի գուբն Արտաշատու ընկեսցի գեշ պիղծ զեռնոց,
Զի ըզհաւատսն Քրիստոսի պահեաց հաստատ անվրկանդ։
Գրաջիր այսօր յարքունիս, զի զհետ կառաց Սուրենայ
Մերս իշխանի և քում հօր՝ ածեն զվրկայն ի կապանս։
Անդ ի բանտին առցես ըզնորհս, գրաայց և ես հուպ առ քեզ։

ԹԷՈԴՈՐ

Բայց զեարդ լցէ մեզ մարթ ի բազմաղեսեալ ի դրանց
Անցանել մինչև առ սուրբն, անշուշտ ի պահ խրատապէս.

ԴԱՍԻԿ

Ի հասանել հօրդ յարքունիս ելջիր և դու ընդ առաջ.
Բայց յորժամ միաբան դիմեն նոքա ի տաճար,
Ըզզոհսըն պրդշուութեան պաշտել կրռոց սընոտեաց,
Դու առ դրրամբ գրոցիս բանտին և մայրդ ազնիւ Աղուիթա
Զմիտս հաճեալ պահապանաց բացցէ ըզդրունս անարգել։

ԹԷՈԴՈՐ

Ո՛վ մայր իմ պաշտելի, պատկեր սիրոյ սրբրութեան.
Կրկին կենաց դու ինձ պատճառ, ահա որդիդ Թէոդոր
Սիրայորդոր ընթանայ ի բանտ ի մահ և ի կեանս։

ՈՄՆ ՈՒՐՈՒԿ.

Աղաղակ յամենուստ այսոր դիմէ յամբոխէն.

ԱՅԼ ՈՄՆ

Առ մեզ և աստ դիմեն ոմանք անշուշտ խընդրակք, Թէոդոր։

ԴԱՍԻԿ

Հարկ ուրեմն է փութալ, մեք ի ձորակս հրաժարիմք,
Զի առ դրրամբք ոստանին ամբոխ սատիկ գումարի.
Ահա խընդրակքն հասանեն, ընկերք ի բաց մեկնեսցուք։

ՏԵՍԻԼ Ե.

ԹԷՈԴՈՐ. ԱՐՄԱՅԻՍ — ՅԼ ՁԻԹԱՆ։

ԱՐՄԱՅԻՍ

Ամենայն ինչ կազմ է պատրաստ, Ամենոդոր, քեզ միայն
Մնայ ամբոխն սպասելով՝ երբ ընդ ըշան տացես չուրն.
Ահա լսին ձայնք երգոց զօրականին ի հրաւեր,
Ըզքեզ կարդայ բանակն ողջոյն, հապա ելցուք ընդ առաջ։

ՏԵՍԻԼ Զ.

ԱՄԲՈԽՆ ԵՒ ԱՌԱՋԻՆՔ

Հարէք նուագս ցընծութեան
Հրսկայազօր Տըրդատայ
Հարէք, որդիք Թորգոմայ,
Հայոց քաջին յաղթական։
Հոռոմք և Յոյնք գովեսցեն,
Հըռչէ և Պարսք սարսեսցին,
Հայք զարուրթիւնս պատմեսցեն
Հրսկայազօր Տըրդատայ։

ԹԷՈԴՈՐ

Դիմեմ ծն և ես
Քաջաց ի հանդէս,
Սիրոյ յասպարէզ
Մատեայց ողջակէզ։
Վայելք երկրաւոր
Համայն անցաւոր
Ածել յիս գըրգիռ
Ճըգնին ի նանիր։
Ընդ հուպ յերկնային
Վառեցայց ի զէն,
Ոչ ես յիս ազգեն
Պատիրք ի գիւէն։
Օն ելից և ես
Սըրբոց յասպարէզ
Եւ փըրկչին ի սեր
Մատուցայց նըւէր։

ՀԱՆԴԷՍ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա. (Տաճար)

ՍՈՒՐԷՆ, ՎԱՀՐԱՄ, ԲՐՄԱՊԵՏՆ, ՎԱՂԱՐՇ. վէճ։

ՊԱՐՆ

Հարէք նուագս ցընծութեան
Հրսկայազօր Տըրդատայ
Հարէք, որդիք Թորգոմայ,
Հայոց քաջին յաղթական։
Հոռոմք և Յոյնք գովեսցեն
Հըռչէ և Պարսք սարսեսցին,
Հայք զարուրթիւնս պատմեսցեն
Հրսկայազօր Տըրդատայ։

ԲՐՄԱՊԵՏՆ

Օն որդեակք մատիք յառաջ և սրբութեամբ մտադիւր
Առ բազնով խընամակալ մօրըս մերոյ Անահտայ
Աւուրս յամայր մաղթեցէք, երգուեալ յարև արքային։

ՊԱՐՆ

Անահիտ մայր Հայաստանեայց,
Առ սեղանովդ արփիազան
Երդնումք յարև յաղթական
Արքայիս մեր վեհապանծ։
Շանթ և կայծակ ջնջեսցէ
Զանուն չարին դաւաճան
Սուգ և ամբոխ ցանկեսցեն
Զաղգ ըզսերունդ Սասանեան։

ԲՐՄԱՊԵՏՆ

Հապա սպասք զոհին բարձցին, տօն խըմբեսցի ցընծութեան։

ՍՈՒՐԷՆ

Բայց ուր լցէ Ամենոդոր, իմ միաձին սիրելի
Արքունեաց անդ ի դրունս զիս համբուրեալ և թըռեաւ։

ԲՐՄԱՊԵՏՆ

Ի ժամ զոհին և երգման ուրեմն նա ոչ գտաւ։

ՍՈՒՐԷՆ

Յըղեսցի փութով Վաղարշ և կոչեսցի ասա առ մեզ։
Զարքայի մերոյս հրաման և ըղպատգամս լուարուք.
Զի թէ ուրեք գըտցի երբեք չար յաղանդոյն Քրիստոսի
Զոր և պաշտէ դաւաճան որդի չարին Անակայ,
Ձեկուսցէ առ մեզ փութով ի հուր ՝՝ ի սուր դատեսցի։
Զի այսքանոյ չարեաց յորդեալ, այսքան արեան ճապաղեաց
Անօրէնքդ այդոքիկ կացին պատճառ գըլխովին։
Զայս և արքայ ծանուցանէ առ նախարարս առ իշխանս
Ի համբառնալ անդ իւրում ի դահ նախնեացն հայրենի,
Զի ամենայն տանուտեարք ի մարտ կացցին կազմ պատրաստք
Եւ յառաջին տալ նըշանին գըտցին փութով առ նըմա։

ՎԱՀՐԱՄ

Ո՛վ աւուրցն յորժամ խոսրով մերըս արքայ կորովի
Ըզ Հոռոմս ահաբեկեալ զԱրշաւիր արկ ի Հընդիկս.
Քանիցն արութեանց փառք՝ և մըրցմունըք դիւցականք։

ՍՈՒՐԷՆ

Ընդ հուպ դարձին ըբեղ աւուրքն, ընդ հուպ արքայն մեր Տըրդատ
Ի մոռացօնս արկցէ զաղէտս, ում չարն Անակ կաց օճան.
Բայց ահա Աթենոդոր.

ՏԵՍԻԼ Բ.

ԱՌԱՋԻՆՔԻՆ ԵՒ ԹԷՈԴՈՐ

ՍՈՒՐԷՆ

Որդեակ սիրուն, ո՞ւր էիր
Ի ժամու անդ պաշտամանց

ՔՐՄՇԱՊԵՏ

Եւ յորժամ զոհք մատչէին.

ԹԷՈԴՈՐ

Յապարանս անդ հայրենի ճեալով դարձիդ անձկանօք։

ՍՈՒՐԷՆ

Ո՞վ որդեակ յոյս իմ միակ, բիւր սիրելի քան ըզկեանս,
Գիտէիր ո՞չ զի ժամուս տօն մեծ խըմբէր նուիրական։

ԹԷՈԴՈՐ

Այո՛ և ես սըրբեցայ ի նուիրական ի մեծ տօն
Որ զօրացոյց զիս ի հոգի վառեալ սիրով երկնային։

ՍՈՒՐԷՆ

Թէ այդքան անձկալի քեզ տօնք սըրբութեան նուիրաց
Առ իմ՞ յայնժամ ի բաց ի զոհից անդ գըտար դու,
Եւ խոտեցեր զերդումն սուրբ, ուխտեալ յարև արքայի։

ԹԷՈԴՈՐ

Զնոյն և ես ուխտ սըրբութեան, Տեառն ուխտեցի համայնից.

ՍՈՒՐԷՆ

Եւ ընդէր ո՞չ ի տաճարիս, այլ յոստանին մութ յանկեան։

ԹԷՈԴՈՐ

Զի տաճարք և սեղանք, հիւղ աղքատին արհամարհ,
Նոցին են յաչս ամենատես տիեզերաց Արարչին։

ՍՈՒՐԷՆ

Վա՜շ գեղեցիկ պատասխանուդդ, բայց յայս տաճար վեհավայր
Պարտ է պաշտել ողջակիզօք զհամայնից մայրն Անահիտ։
Եւ երկիր պագ դու որդեակ մի գուցէ քեզ զայրացի։

ԹԷՈԴՈՐ

Ո՜հ, ներեա, հայր անձկալի, թողէք երթալ զիս աստի։

ՍՈՒՐԷՆ

Եւ ընդէր Աթենոդոր, ո՞չ կամիցիս յաղել զոհս։

ԹԷՈԴՈՐ

Տարէք աստի զիս ի բաց եթէ կամիք և ի բանտ։

ՍՈՒՐԷՆ

Զինչ լցէ Աթենոդոր, զինչ այդ քո բանք առնեն յայտ.

ԹԷՈԴՈՐ

Զի կռոցդ այդ դրօշելոց, երկիր ես ոչ պագանեմ.

ՍՈՒՐԷՆ

Խելացնորիս, Աթենոդոր, զի՞ եղև քեզ, ով որդեակ.

ԹԷՈԴՈՐ

Զի կուռքդ պիղծք և մնոտիք խելացնորել տան թերևս։

ՍՈՒՐԷՆ

Զի՞նչ շրթունքդ այդ խօսեցան

ՔՐՄԱՊԵՏՆ

Այ՛ ամպարիշտ.

ՍՈՒՐԷՆ

Զի՞նչ ուրեմն,

ԹԷՈԴՈՐ

Քրիստոնեայ եմ (Անխոնջ դրոշելոյն Անահտայ և Խորտակէ)

ՍՈՒՐԷՆ

Դու քրիստոնեայ

ՔՐՄԱՊԵՏՆ

Կախարդ է դա վախիցուք։

ԹԷՈԴՈՐ

Այո՛, եմ քրիստոնեայ, Տեառնէ երկնից պաշտօնեայ.

ՍՈՒՐԷՆ

Լուռ լեր ա՛յ անօրէն, ուստի՞ ուսար զայդոսիկ
Դիտացեր զի՞նչ է քրիստոնեայն, դից և մարդկան դաւաճան։

ԹԷՈԴՈՐ

Սուտ բարուրք են այդոքիկ և թշնամեաց նոցին գիւտ.
Ընդդիս միայն արհամարհեն զպատկերս դիւաց գարշելեաց։

ՍՈՒՐԷՆ

Այդպէս ուրեմն յանդգնիս առաջի իմ բարբառել.
Պագ երկիր կռոց սրբոց, թէ ոչ խկցին մեռանիս.

ԹԷՈԴՈՐ

Հար զիս այսրէն, թէ կամիս, ես Տեառն եղէց ողջակէզ։

ՍՈՒՐԷՆ

Որդի ժանտ. կորիր ի բաց

ԹԷՈԴՈՐ

Քրիստոնեայ եմ ես, ով հայր։

ՍՈՒՐԷՆ

Ո՛վ ցասումն, ով դիք անմահք. զի՞նչ ես լսեմ քրիստոնես,
Իմ միակ հատոր հոգւոյս՝ իմ պայազատ լոյս աչացս.
Ո՛վ աւուրս դառնութեան մինչ խմբէի տոն հրճուելոյ։
Բարձցին զարդք խնդութեան և պատեսցէ կոծ սրգոյ.
Երկիր, այերք, մի լաք, մի լուիցէ և տաճարս
Թէ Սուրէնայ Սալհունոյ և միածին քրիստոնեայ։
Օ՛ն և օն թէ ի չար միտս յամառեալ նա պընդեսցի,
Ընդաշտոյս ի կողս նորա մխեսցեն ձեռք հայրենի.
Այո՛ ձեռք հայրենի... ոհ անկանիմ ես յուշոյ,
Ամենեքին երթայք ի բաց, երթայք զիշխան ձեր ողբալ.
Կացցէ աստ Վահրամ միայն... խելացնորիմ, անմահ դիք։

ՏԵՍԻԼ Գ.

ՍՈՒՐԷՆ ՎԱՀՐԱՄ

ՍՈՒՐԷՆ

Ո՛վ դառն աւուրս՝ յոր դարձ առնեմ ի հայրենիս արտասուօք
Մինչ ի վայելս ընտանի համարէի ըմբոշխնել
Ոհ Վահրամ, զինչ դառնագոյն իմոս որդեակ քրիստոնեայ

ՎԱՀՐԱՄ

Եւ եցէ այդ արդարև.

ՍՈՒՐԷՆ

Զլբրենի նորա բանս
Ո՞չ և դու ինքնին լուար, ահ եցու թէ ընդեր սուտ.

ՎԱՀՐԱՄ

Ես բանից տըղայ մանկան երբէք հաւատս չընծայեմ.
Ո՛ դիտե զինչ հրապոյրք պատրեն զամենորհ նոցին տես.
Զի որպէս մանուկ մատաղ յայդքան եղեռն ժպրհեսցի

ՍՈՒՐԷՆ

Իսկ թէ հարցեալ հաւաստեաւ և քրիստոնեայ նա գըտցի

ՎԱՀՐԱՄ

Դառն է այո, ով Սուրէն, դառն այդպիսի հաւաստիք։

ՍՈՒՐԷՆ

Էր իմ միակ որդի սիրուն
Ամենոդոր եղի անուն,
Հաբսին իմոյ նազելի
Միակ ծընունդ պաշտելի։
Ինձ երանիս բիւրոց բիւրս
Կարդացին Հայք հարսանիս,
Բայց դառն աղէտք և չար բաղդ
Ելոյծ զերազն իմ և բաստ.
Եւ հայր որդւոյս գեղանի
Կացեց դահիճ վայրենի։
Իմն Աղուիթա իմն աղաւնեակ
Ո՞ր նազելի մեր որդեակ։

ՎԱՀՐԱՄ

Ո՛վ դառն աղէտք ով չար բաղդ,
Ի հաւաստել անդ յանկարծ.
Եթէ արքայս մեր Տրդատ
Առցե զերացդ ըզկասկած

Ի սուր ի հուր դատեսցի
Զազգ և սերունդ սալՀունի.
Ո՛վ դիք հասէք օգնական
Մեզ եղկելեաց ապաստան։

ՍՈՒՐԷՆ

Բայց ընդէր գութս այս վատարի
Ո՛ւր եցե իմ սիրտ կորովի.
Օ՜ն անդր ի բաց սէր մահական
Եւ կեցցեն դիք անմահական։

ՎԱՀՐԱՄ

ԶԱթենոդոր տուր կոչել աստ։

ՍՈՒՐԷՆ

Կամ յերկիւղէն լեցի ըզդաստ...

ՎԱՀՐԱՄ

Եւ ծպառնասջիր գեղանս պէտպէս.

ՍՈՒՐԷՆ

Կամ դից ցասման լուծցէ վըրէժ։

ՏԵՍԻԼ Դ.

ՍՈՒՐԷՆ, ՎԱՀՐԱՄ, ՎԱՂԱՐՇ

ՍՈՒՐԷՆ

Ո՞ր արդ նա եցե Վաղարշ, կոչեսջիր աստ առաջի

ՎԱՂԱՐՇ

Ըստ ապարանս ել մեկնեցաւ դեպ ի դրունս ոստանին.

ՍՈՒՐԷՆ

Եւ միայնակ թէ այլք ոմանք զՀետ նորա կրթեցան.

ՎԱՂԱՐՇ

Ի մեկնել անդ իւրում ընդա տեսի միայնակ,
Սուղ ինչ յետոյ անդրը դիմեաց և պատանեակն Արմայիս։

ՍՈՒՐԷՆ

Այ, որդի անօրէն, ահա և ես ընթանամ
Կամ կենդանւոյն ածել զնա երկրրպագու աստուածոց
Եւ կամ դիակ անկենդան ի զոհ իւրում Քրիստոսի։ (ՔՆՈՅ)

ՏԵՍԻԼ Ե. (Զորս)

ԴԱՍԻԿ, ԹԷՈԴՈՐ՝ ՈՒՐՈՒԿՔ

ԴԱՍԻԿ

Եկ որդեակ, եկ ի գերկս իմ աւազանին սուրբ ծընունդ,
Քեզ ձորակս այս սրբեցաւ, քեզ ցընծութիւն ըզդեցցին
Տառապեալ որդիք մարդկան ի վայելից տարագիրք։
Զօրացեր ի սեր փրկչէն, զի պատերազմ ահաւոր
Հանդերձեալ քեզ սատանայ և արդէն իսկ առ սկիզբն։

ՊԱՐՆ

Զինչ այս արիւն ծիրանի
Հեղեալ յերկիր անապատ,
Քան ըզբարբառ կենդանի
Վրկայ առ սուրբ իւր հաւատ։

ԹԷՈԴՈՐ

Ո՛վ կոյս, ով սուրբք և զուարթունք
Կացէք որբոյս ինձ թիկունք,
Ի թևքս ձեր լուսեղէնս
Վերամբառնալ զիս յերկրէս։

ՊԱՐՆ

Զինչ այս արիւն ծիրանի
Հեղեալ յերկիր անապատ,
Քան ըզբարբառ կենդանի
Վրկայ առ սուրբ իւր հաւատ։

ՏԵՍԻԼ Զ.

ԱՐՄԱՅԻՍ (Գոյն)

Ո՞ր գնան, զինչ լուայ, ով իցէ այն ալեոր
Որ զանից իւրոց ըզկնի ձրգեաց տարաւ զամենայն
Եւ ընդէր Աթենոդոր տարամերժեալ կայ՝նդ ուրուկս.
Ո՞ր դիմէ նա ընդ վատշուէր և սինըքոր խուժանին.
Օն դիմեցից փրրկել ընդա. բայց զինչ շառաչ ի հովտիս։
Ահսըր դիմէ իշխան Սուրէն, հապա փութով ի փախուստ։

ՏԵՍԻԼ Է.

ՍՈՒՐԷՆ Ի ՎԷՆՈՒՐԻ ՈՄԱՆ

ՍՈՒՐԷՆ

Ո՞ր ի ձեռացս ճողոպրիցիս այ դու մանուկ ստամբակ
Օ՛ն զորականք ընդ այս վարդէք, ահա դիմէ արագասն,
Ի զուր է այդ փախուստ ընդ հուպ անկցիս յիմ ժանիս.
Ո՛վ ծնունդ չարաբաստիկ դիցըն ցասման նըշաւակ,
Մինչ քաջասանծ հայր քո չուառ 'ի ցընծութեան անդ յերազ
Ըզշըքեղ հարսանեացըդ պատրաստեր զհանդերձանս
Յարքունի զուգեալ ի զարմ, դու յեղեռունս սընանիս.
Ահա կալեալ ածեն զնա, Աթենոդոր բայց չէ նա

ՈՄՆ Ի ԶԻՆ.

ԶԱրմայիս գըտաք միայն, զԱթենոդոր, ոչ տեսաք։

ՍՈՒՐԷՆ

Մանուկ չար ժանտ և չարակից Աթենոդոր ո՞ւր իցէ.

ԱՐՄԱՅԻՍ

Յոստանն Թերևս Սուրէնաչէն ի խընդիր հօրն անձկալուդ.

ՍՈՒՐԷՆ

Ի խընդիր հօրն, ով հայր նորա, ոյր է որդի անօրէնն
Ոչ գիտիցեա՞զի ես եմ հայրն.

Ֆ 63/ 401-2009
(3364/41)

ԱՐՄԱՅԻՍ

Եւ իցէ՛ հայր արժանի.

ՍՈՒՐԷՆ

Ո՞վ է մանուկդ այր լըրբաբան, բարձէք զդա յիմ աչաց.
Հարէք անխընայ անկցի գըլուխն անզգաստ։

ՏԵՍԻԼ Ը.

ԱՌԱՋԻՆՔԻՆ ԵՒ ԹԷՈԴՈՐ

ԹԷՈԴՈՐ

Զօրականք զինչ գործէք, զինչ ով հայր իմ պաշտելի.

ՍՈՒՐԷՆ

Կացցեն վայր մի, ահա և նա, գբեզ այս խընդրէի.
Զօրականք թոյլ արարէք տարայք զդա ի յոստան։
Եւ դու որդի ապերախտ, զինչ աստանօր գործէիր։

ԹԷՈԴՈՐ

Լուեալ զձայն զօրականին որ ըզԳրիգոր մեծ վըկայն
Տանին ի գուբն Արտաշատու։

ՍՈՒՐԷՆ

Եւ զինչ բան էր քո ընդ նըմա

ԹԷՈԴՈՐ

Ներեա հայր թէ զայսոսիկ զանխուլ ի քէն գործեցի.

ՍՈՒՐԷՆ

Հայր քո.. ներել քեզ.. ի Սեղեմնուտ... առ Գրիգոր....
Այդ իսկ լըցաւ չափ խեռութեանդ չար ծընունդ
Ընդ հուպ տեսցես թէ զինչ իցէ զանձն հրաչակել քրիստոնեայ։

ՀԱՆԴԷՍ Գ. (բաւական)

ՏԵՍԻԼ Ա.

ԹԷՈԴՈՐ (Դայեակ)

Ո՞ւր իցեմ ես զինչ այս տեսիլ.
Զինչ յոսկերս իմ և մարմին
Խաղայ աւիւն երկնային.
Կարծեմ զոլ ի յերկինս
Եւ կամ ի բանտ խաւարին։
Ո՛ւր թըռեան պարք լուսաւոր
Զինեւ կացեալք ի բոլոր.
Ո՞հ երազ էր ցանկալի
Եւ ըսփոփանք փարելի։
Ի սուրբ տեսիլն հիասքանչ
Միտք և շըրթունք ի հառաչ
Ինձ օրհնութիւնս երգէին
Ըստ օրհնութեանց երկնային։

ՏԵՍԻԼ Բ.

ԹԷՈԴՈՐ, ԱՐՄԱՅԻՍ

ԹԷՈԴՈՐ

Էր Արմայիս ըզգերագոյն վայելից ժամս խրոովեա.
Զինչ գործ է քո ի զընտանիս առ ոճրագործ քրիստոնեայն։

ԱՐՄԱՅԻՍ

Այդ քո սեր պանծալի. այդպէս զինեւ այսն առնես.

ԹԷՈԴՈՐ

Թէ քրիստոնեայք քան ըզքնաւս 'ի մարդկանէ են վարչուեալք.
Զիս ի թուոյ նոցին ի բաց ընդէր այդպէս դու թափես։

ԱՐՄԱՅԻՍ

Զի ի քեզ բաց յաղանդոյն ամենայն ինչ է անբիծ։

ԹԷՈԴՈՐ

Իսկ ի քեզ, ո՛վ Արմայիս, բաց ի յուսոյն զոր կբրեմ
Ընդ հուպ շնորհիս գոլ հաղորդ, ամենայն ինչ է անսուրբ։

ԱՐՄԱՅԻՍ

Թող զայդպիսի ցընորս ի բաց, ժամ է արդ քեզ խորհելոյ.
Զի ընդ հուպ հասցե հայր քո զբսպառնալիսն հանել յանդ։

ԹԷՈԴՈՐ

Եւ քանի՞ փառք վկայական թէ դիպեցայց վախճանի։

ԱՐՄԱՅԻՍ

Եւ չէ՞ քեզ փոյթ անմխիթար թողուլ զՀայր անժառանգ
Զեան քեզ փոյթ աղիողորմ դառնակրկի՛ծ մոր լալոնք,
Ո՞ր և սէրն այնքան ի քէն սերտ ջերմագին ինձ երդուեալ
Ո՞չ ինչ ուրեմն են սոքա առ հնարագիւտ պատրանօք։

ԹԷՈԴՈՐ

Գէր քան ըզբնաւս սիրեմ զԱստուած։

ԱՐՄԱՅԻՍ

Ո՞վ լեցէ այդ քո Աստուած
Այդպէս անգութ անկարեկիր որ ընդ արիւն զուարճանայ։

ԹԷՈԴՈՐ

Զի՞նչ է արիւն և կեանքս համայն առ շնորհիւքն անվախճան։

ԱՐՄԱՅԻՍ

Այդպէս մահ է ցանկալի և սիրելեաց արտասուք.

ԹԷՈԴՈՐ

Այնքան մահ է փառաւոր և արտասուք արհամարհ։

ԱՐՄԱՅԻՍ

Ուրեմն Աստուածդ ուսուցանէ զատելութիւն ոչ ըզսէր.

ԹԷՈԴՈՐ

Նա ինքն իսկ սէր է գերագոյն ատելութեան չիք տեղի։

ԱՐՄԱՅԻՍ

Թող արդ զԱստուածդ անծանօթ և վայելեա ի քո փառս.

ԹԷՈԴՈՐ

Զի՞նչ են փառքս անցաւոր հանդերձելոցն ի կըշիռ.

ԱՐՄԱՅԻՍ

Առաջի հօրքում ծածկեսջիր, ընդէր անձամբ դիմագրաւ
Ի մահ ճեպես անխորհուրդ՝ պաշտօն տար դից առ երեսս։

ԹԷՈԴՈՐ

Մի՞ Արմայիս, մի՞ դու այդպէս իմ առաջի բարբառիր
Ամենատես զի՞նքն Աստուած լսէ հայի յամենայն
Եւ որ սրբոցիս ընդա պաշտէ, հարկ է գործով ցուցանել։

ԱՐՄԱՅԻՍ

Յառոյգ հասակդ այդ խընայեա դու պայազատ իշխանիս
Երկիրս համայն սիրէ ըզքեզ. վայելեսջիր դու ի նմին։

ԹԷՈԴՈՐ

Բայց ես լսեմ ասա ոսնաձայն ծն վրճարեա Արմայիս
Գուցէ ի բանտ եկեալ հայր իմ և վրտանգ ինչ հասցէ քեզ.

ԱՐՄԱՅԻՍ

Ընդ քեզ այո՛ և ես կամիմ մեռանել ո՛վ բարեկամ

ԹԷՈԴՈՐ

Թէ ի սէր փրրկչին իմոյ. ո՛հ զինչ քան զայդ պանծալի,
Ապ՝ եթէ ոչ՝ երթ Արմայիս, զայս ես ի քէն թախանձիմ.
Ընդ հուպ անդրէն գոցես զիս, ես քեզ եղէց օգնական.

ԱՐՄԱՅԻՍ

Ո՛հ երկինք լուա՛ ինձ նա, արդ ես գընամ խընդութեամբ։

ՏԵՍԻԼ Դ.

ԹԷՈԴՈՐ (դայեակ)

Ո՛վ Տէր, քան ըզմահ ինձ դառնագոյն այս բաժակ
Զիարդ տեսից ես ի բանտի ըզհայր իմ զայն ինձ սիրելի
Յորոյ ի գիրկս գըգուեալ երբեմն համբուրէի կաթոգին։

ՏԵՍԻԼ Դ.

ԹԷՈԴՈՐ, ՍՈՒՐԷՆ, ՎԱՀՐԱՄ

ՍՈՒՐԷՆ

Ո՛վ դառն արև վատաբախտիկ և որդի իմ բանտի
Կալանաւոր ընդ չարագործս և ես զիարդ հանդուրժեմ։
Խըզեսցին ըզլթայք դորա, եկ ի գիրկս իմ ով որդեակ
Մոռանամ զամենայն շատ է ևեթ բան մի քոյ
Ըզսրգալից զայս իմ կեանս անդէն ի տօն փոխարկել։
Ո՛վ որդեակ մի զըլանար տուր սըրտի հօրդ խընդութիւն
Որ զորն ողջոյն յարտասուս և ի յերկիւղ համոկի
Այսմ ուրեմն սիրես ըզհայր, որպէս սիրէ նա զորդին։

ԹԷՈԴՈՐ

Եւ առաւել իսկ քան ըզնա սիրով նորին ես մեռայց

ՍՈՒՐԷՆ

Ուրեմն անասս խրատու նորին և բանից կաս հընազանդ.

ԹԷՈԴՈՐ

Է մեր հայր գերագոյն ում հնազանդել նախ է պարտ։

ՍՈՒՐԷՆ

Թող զայդ ցընորս խաբեպատիր, յանմեղ ի միտդ եկամուտ.

ԹԷՈԴՈՐ

Ես ընդոյն վառել ըզսէր տենչամ ի սիրտ հօրս իմոյ.

ՍՈՒՐԷՆ

Այդքան ուրեմն հասեր ի՞չափ և հօր քում կաս վարդապետ
Գիտասջիր զի ըստ սիրոյս է և ցասումն ի սըրտի
Եւ մի՛ ի զուր լինջիր վըստահ ի հայրենի սէրս նախկին։
Այսմ ինձ հըրամայեմ խոտեսս զաղանդն անօրէն
Եւ սթափեալ ի ցընորից պաշտես ըզդիս բարերար։

ԹԷՈԴՈՐ

Քրիստոնեայ եմ։

ՍՈՒՐԷՆ

Ո՛վ ցասումն, կորիր աստի, չեմ ես հայր.
Վաղարշ թող զդա երթալ թող կեցցէ նա ընդ պիղծ ըստնս,
Զի ի բանտ իսկ աստ նընջել զայն իւր ի փառըս գերէ։

ԹԷՈԴՈՐ

Ո՛վ հայր իմ։

ՎԱՀՐԱՄ

Թէ լցէ հայր, թէ ինա սիրես ըզ նըմա.

ԹԷՈԴՈՐ

Ոչ կարեմ։

ՍՈՒՐԷՆ

Տարէք ի բաց ոչ հանդուրժեմ տեսանել (դառնէն).
Օ՜ն և ծն թէ առ ուրուկս ի Սեղեմնուտ ընթասցի
Զև խոնարհեալ արևու տեսցէ թէ ով է Սուրէն։

ՏԵՍԻԼ Ե.

ՎԱՂԱՐՇ

Թէ ընդ հայր և ընդ որդին հարկ էր ընտիր ինձ առնել
Ո՞հ ըզհետ որդւոյ նորին ընթանայի կամակար.
Մինթէ աղանդն այն քրիստոնեայ չար ինչ ի նա յաւելու,

Ի պստանեակն այն սիրելի յամայր ի մէնջ պաշտելի.
Նա առաւել սիրեմ ըզնա, զի չգիտեմ զինչ նոր չբնաղ
Յետ լինելոյն քրիստոնեայ յաւել շնորհս ի յինքեան։
Եղբուկ մեզ. բիւր աւաղ, թէ ձեռն անգութ և վայրագ
Զնազելի դեռափքթիթ զառոյդն ըզտիս խըզեսցէ.
Վայրագութեան Սուրէնի ով ի կըշռ ժպրհեսցի
Յաղու բանից իսկ նորա ես զարհուրեալ և դողամ։
Այլ արդ ինձ անկ է տեսանել թէ զինչ զոյցք ի գաւթի։

ՏԵՍԻԼ Զ. (անպատ.)

ԹԷՈԴՈՐ

Ի գիմել աստ ի ձորակս ոգիս իմ նոր կազդուրի
Բայց խոնջ յերկրաւորացս և կարօտիմ հանգըստեան.
Դադարեցից աստ իվիմս. ընդ ստուերաւ ծառոցս այս
Նոր իմն ըզգամ խաղաղութիւն խաղաղութիւն երկնային
Որ ի հոգի իմ ընդմտեալ երկրաւորացս ածէ քուն.
Ո՞վ քուն յաւիտենից աստեացս ի սպառ մոռացօնք
Կամէի նընջել աստեացս ականողիքըս փակեին։
Ա՛յլ գաւառ այլ աշխարհ աչք իմ ստէպ որոնեն
Լայսն ինձ աղօտ վայրքս են տըխուր զանտի միայն կայս խընդեմ։
Եւ երբ լեցի հասանել երանութեան անդ ի յարկս։
Զունիմ ինչ այլ յերկրաւորաց որ զիս կապէ բաց յուսոյն
Առ Քեզ ով Տէր փութով գիմել ի սերդ անմահ վայելել։
Ոհ մարմն իմ նուաղեալ այլ ևս ժուժել ոչ կարէ
Ո՛վ մայր իմ մայր պաշտելի դու ինձ միակ կաս յերկրի
Արտասուօք անմահ յուսոյն ծաձկեսցես զիս ընդ հողով.
Քուն ըստփիչ զաչս իմ պատէ միաք մեռանին յանձկանաց
Խաղաղութեամբ առ Տէր հանգեայց վէմս ինձ լեցի Յակոբայն։

ՏԵՍԻԼ Գ. (Զորդ.)

ԴԱՍԻԿ, ՈՒՐՈՒԿԲ.

Մինչև ցերբ, ով Տէր արդար
Ծառայդ իցեն արհամարհ,
Լերինք ծործորբք և փապարք
Քո սուրբ անուան են տաճարք,

ՈՄՆ Ի ՊԱՐՈՒՆ

Մանուկ շնորհօք պատարուն
Շուշան ծաղիկ սիրասուն
Քեզ նախընծայ ողջակէզ
Անմեղութեան ի հանդէս։

ԱՅԼ ՈՄՆ

Բիւր անգամ քեզ երանի
Արքանեակ Տեառն անմահի
Վարդ ի շուշանդ փըթթեսցի
Ի սուրբ տաճար Սիովնի։

ՊԱՐՆ

Մինչև ցերբ ով Տէր արդար
Ծառայդ իցեն արհամարհ,
Լերինք ծործորբք և փապարք
Քո սուրբ անուան են տաճարք։

ՏԵՍԻԼ Ը.

ԱՌԱՋԻՆԵՌՆ ԵՒ ՍՈՒՐԷՆ

ՍՈՒՐԷՆ

Զինչ այս երգոց ցընծութիւն, զինչ վատշուէրքդ առնեն աստ,
Թէ ոչ պըղծէր դաշտիս իմ անարդ արեամբքդ ձերով,
Կառափունք ձեր վիրալից համբուրելին արդ զերկիր.
Ասացէք ո՞ւր Աթենոդոր։

ԴԱՍԻԿ

Չէ աստ որդիդ Թէոդոր։

ՍՈՒՐԷՆ

Եւ ո՞վ զանունն Աթենոդոր էգեղ փոխեաց Թէոդոր.

ԴԱՍԻԿ

Շընորհք երկնահրաւէր յորմէ հետէ ժառանգեաց.

ՍՈՒՐԷՆ

Ուրուկ պիղծ.

ԴԱՍԻԿ

Յաչս աշխարհի, սուրբ առաջի Աստուծոյ։

ՍՈՒՐԷՆ

Ո՞վ իցէ ձեր աստուած, այն որ ի վերս ի հարուածս
Զոգին փըչեաց յԱրտաշատ, սարսեսջիք դուք անօրէնք։

ԴԱՍԻԿ

Աստուածն մեր քո է Տէր, նա զոր սիրէ աստ տանջէ.

ՍՈՒՐԷՆ

Յայդքան քո կեանս չար ալեոր, այդպէս ուսար բաջաղել.
Համբերեա վայրիկ մի ևս յետ նախ սըրոյս արբելոյ
Եւ ձեզ ամենեցուն Հասցէ կորուստ անխուսափ (ՖՆԱՅ)։

ՏԵՍԻԼ Թ.

ՈՒՐՈՒԿՔ, ԱՐՄԱՅԻՍ

ԱՐՄԱՅԻՍ

Հարկ է ուրեմն մերձենալ ի պիղծ ուրուկս չարագործ.
ԶԱթենոդոր, ասացէք օն, տեսէք դուք։

ԴԱՍԻԿ

Բընաւ ոչ։

ԱՐՄԱՅԻՍ

Ըղհայր նորա ըզՍուրէն։

ԴԱՍԻԿ

Յորդւոյն ելեալ ի խընդիր։

ԱՐՄԱՅԻՍ

Ո՛վ դիք փութով ճեպեմ։

ԴԱՍԻԿ

Դիմեմք և մեք սիրելիք
Զի ի հանդէս վըկայութեան դուցէ յետնեալ գտանիմք։

ՏԵՍԻԼ Ժ.

ԹԷՈԴՈՐ (ԴԷՂԷ), ՍՈՒՐԷՆ

ՍՈՒՐԷՆ

Ահա որսն իմ առաջի, զոր խընդրէիս արդ գըտի.
Ով տեսիլ... ԸնդՋէ անմեղ որպէս ի գիրկս իմ երբեմն
Անմեղութեան իցէ՞ քան զայս չընաշխարհիկ կերպարան
Եւ զիաՐդ ոչ յուզեսցի սիրտ հօրնորա..... սակայն ոչ
Հարկ է նըմա մեռանել.. զայս դիք ինձ հրամայէն
Զայս և պատիւն արքունի ինձ խոստացեալ յարքայէն...
Այլ ընդէր դողայ անձն իմ... ընդէ՞ր սարսուռս այս յոսկերս.
Պահ մի յառաջ համայն ջեռեալ մարմինս ի հուր տոչորէր.
Սառնանման արդ ցուրտ արձան... ձեռք լըքանին ի գործոյ.

(ՅԳԷՂ ՂՈՐԴ)

Ո՛հ մըթագնին աչք իմ համակ... առ ի՞նչ ես աստ գիմեցի...
Ո՛վ խորհուրդ արիւնարբու, բաց յինէն այլք զայն ծանեան՞
Սպանանել զոր ես ծընայ... խաւար կըլցէ զիս յանդունդս...
Ցնըզվեալս 'ի մարդկանէ և անիծեալս ի սուրբ դէց...
Ի դէց... բայց ես փառաց նոցին աստ գամ վըէժխընդիր...
Ո՞չ եղկելին բանիւք իւրովք յայտ յանդիման նախատեաց
Թէ կեցցէ՞ այդպիսին ի ցաամանէ արքային
Զինչ լինիցի սալՀունեաց տան, ուր անկեայց ապաւէն,

(ՈՒՆՈՒ ՂՈՐԴ)

Ոչ ես, աստուածք գքեզ ի բերանոցդ դատեսցին.
Դու անձին քում լեր դատաւոր, ընտրեա ըզկեանս կամ ըզմահ.
ԶԱթենոդոր ԶԱթենոդոր.

ԹԷՈԴՈՐ

Եւ դու առ ի՞ս կաս հայր իմ։

ՍՈՒՐԷՆ

Այսուհետև չեմ ես հայր... երկրպագեմ աստուածոց

ԹԷՈԴՈՐ

Քրիստոնեայ եմ և եղէց միշտ։

ՍՈՒՐԷՆ

Եւ լինիցիս յաւիտեան (հարկանէ սրով)։
Այս դէց ցասումն... յայսմհետէ կորիր յԼենէն պիղծ դաշտն...
Այ... ուր ես խոյս տաց, երկիր կլլցէ զնոր զՀաղս...
Աստ որդի իմ դիտապատ.... անէծք կլլցեն և ըզդիս։ (Քնայ)

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԱՐՄԱՅԻՍ ապա ՈՒՐՈՒԿՔ

ԱՐՄԱՅԻՍ

Ո՛վ տեսիլ... վայրագ Սուրէն, Աթենոդո՛ր սիրելի
Զիարդ տեսից զլոյս արևու առանց քո ո՛վ բարեկամ։

ԴԱՍԻԿ

Ծառայք Քրիստոսի, Թըռեաւ յերկինս Թէոդոր
Բարեխօս մեզ առ Անմահն աստ ի հովտէս տըրտմալից.
Երգս առէք արդ օրհնութեան։

ԱՐՄԱՅԻՍ

Ո՛վ երանեալ ծառայք Տեառն
Արեամբ սրբեալ վըկայիս՝ և ես լինիմ քրիստոնեայ։

ՈՄՆ

Ցցիս աշխարհ համարէն.

ԴԱՍԻԿ

Մեծ են այսր շնորհք Տեառն
Ընդ հուպ արքայք աշխարհ համայն երկիր պագցէ Քրիստոսի։

ՊԱՐՆ

Հապա հանէք օրհնութիւն
Տեառըն ելից Արարչին.

Արքայք հըզօրք և իշխանք
Պագէք երկիր ի խոնարհ։

ԱՐՄԱՅԻՍ

Անբեր ոստոց դու ծաղիկ
Թէոդոր սուրբ Իշխանիկ
Յամենալոյս ի յարկաց
Ի մանկուցոյս պար հայեաց։
Հովտի վըշտաց դու շուշան
Գունով գեղով անընման,
Սըրբեա սիրովդ անուշակ
Խառնեա ի քոյդ ի դասակ։
Փառք պարծանաց հայկազանց
Անփորձ տիոց մեր մանկանց
Անունդ՝ի ցոյս միշտ յորդոր
Սալհունեաց սուրբ Թէոդոր։

Ամերիկանոս Պողոսեան
ՍԵՐՆԲՐԱԿԵԱՆՑ
Ազգարան

ԱՒԱՐՏ

ՀԱՅԿ-ՍՍՐԱ.
Մ. Մեսրոպեան
Ս. ԹԱՍԱԼԻՑՅԱՆ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0177614